

Առ Արհիպատիւ եւ Գերապայծառ Աբբահայրդ իմ
ի սկիզբն նորոյ ամիս

Ն Ո Ւ Ա Պ

Միշտ իսկ և ցանկ, այլ առաւել այժմ ի սկըսուած նոր տարւոյս,
Կողկողագին աչք ի յեթեր կենդանութիւն մինչ մաղթէ
Ուխտ երկնակրօն Հարց և Եղբարց ցաւագնեղումդ ի յախտէ,
Գոլ ձայնակից բամից նոցին և ինձ էր անկ կըրտսերոյս:

Այլ իմ հրեշտակն ըզմաղթանաց փոխէ ըզձայն ի խրախոյս:
Ոչ աստանօր ըզտասնեղումբք աստիճանօր իջեալ շող,
Եւ ոչ զուշակ ոք երկնառաք մեզ զապառնուոյն հերձեալ քող,
Փարատելոյ ցաւոցդ ի քէն տըւեալ նըշան ազդէ յոյս:

Մարգարէիցքն Տէրն ինքնին տայ աստ պատգամ անընդմէջ,
Ձայն զոր յառաջն ետ՝ ի յերկիր առ գուլթ սիրոյն յորժամ էջ,
Ընդ իւ ընկճին միտք իմ ըմբոստ անդիմադարձ և անվէճ:

Ձի ուր երկուց և կամ երկից միաբանեալ յիւր անուն,
Ձոր հաւատով ինչ ի Հօրէն իւրմէ խընդրեն թէ առնուն,
Ձընկըրկեսցեն բամեալ մեր իղճք զանին ի քէն ըզմահուն:

Հ. ԵԳՈՒԱՐԴ ՀԻՒՐՄԻՊԵԱՆ

ԾԱՆ. — Ուխտիս Գիւանէն կը հանենք քաղցրախօս Քերթողիս զրչէն բխած այս նուագը,
որ կը գտնուէր իր մէկ նամակին մէջ (1834 Դեկտ. 18): Այդ ժամանակ ինքը դեռ 35 տարեկան
էր: Ձայն կ'ուղղէ Հոգիմէն՝ մերձակայ Կաղանդին առթիւ իբրեւ որդիական արտայայտութիւն մը
առ Գերպ. Սուքիաս Սոմալեան Աբբ. և Ընդհ. Աբբայ Մխիթարեան Միաբանութեանս, որուն
առողջութիւնը՝ ինչպէս ծանօթ է՝ խանգարուած էր Մուրատեան հրիտակի խնդիրներուն առթիւ
նախապէս կրած տառապանքներէն:

Հ. Ղ. Տ.



ԱՇՈՒՂ ՌՈՒԲԵՆ ՎԵՆԵՏԿՈՅ ՄԵՋ

Որպէս խորհրդանիշ իր ցեղին՝ Աշուղ Ռուբէն
(Գարախանեան) աշխարհէ աշխարհ պանդխտելով
իրեն կոչում ըրած է արուեստի ներշնչումով
նուագել հայ երգը ու այնպէս հայուն փառքն
ու վիշտը պատմել:

Միջագետքի անապատներէն յետոյ մինչեւ Եւ-
րոպական մայրաքաղաքներն է տարած իր քե-
մակը ու նուագը և այնպէս թոված լսողները:
Այս անգամ Խալիլա անցած՝ պահ մը սփոփեց
Միւսանահայութիւնը և եկաւ անընթացին Վենե-
տիկ, ուր, իր առաջին այցելութեան Մուրատ-
եան վարժարանին՝ կարօտով հրաւիր-
ուած՝ յօժարութեամբ և սիրով նուագահանդէս
մը տուաւ Գեղտ. 13ին: Վարժարանին դահլիճը
բռնած էին այդ օրը Մխիթարեան Հայրերն ու
աշակերտութիւնը, Մ. Ռափ. սաները, Հայ գա-
ղութիւնը և օտար հրաւիրեալներու պատկառելի թիւ
մը: Կը նախագահէր Ռափայի Ընդհ. Աբբայայրդ
մը: Սրապիտն Վրդ. Ուլուհանեան, և իր
քով Ֆրանս. հիւպատոսը, յետոյ Կոմս Օրսի, և
քաղաքական ու եկեղեցական բարձրաստիճան
մարդիկ:

անձնավորութիւններ, Վենետիկյ Երաժշտանոցին
ուսուցիչներ և ուսանողներ և երաժիշտ զանա-
զան մասնագէտներ ու լրագրողներ:

Աշուղ Ռուբէն աւելի քան ժամ մը մեզ ապրե-
ցուց արեւելեան աշխարհի երազներով ու կարօ-
տով: Իրեն կ'ընկերանար իր տիկինը՝ Ազնիւ,
դաշնամուրի վրայ, զմայլելի ճարտարութեամբ
և զգայնութեամբ:

Ռուբէնի նուագած եղանակները, բոլորն ալ
մեծապէս գնահատուած ու ծափահարուած, էին
Սայաթ Նովայի «Աշուղի երգը», Ռ. Մելիքեանի
«Մի լար», Կոմիտաս Վ. ի «Ծիրանի ծառ», Ա.
Սպենդիարեանի «Գայթարմա», Ա. Տիգրանեանի
«Անուշ» և Կոմիտասի «Սարգիս Բարեպետ»
«Պարերգ»-ը, Գ. Սիւնիի «Արեւելեան պանդխտու-
թիւն», Կովկասեան երգ մը, Կոմիտասի «Կորչա-
թիւն», և իրմէ հեղինակուած մեղամաղձոտ ու
քնքուշ «Այրարատ», «Հայաստանի յուշեր»,
«Հայրենի կարօտ», «Հայ հովիւր» ուր քեմակը
լաւ զարմանալիօրէն լեռներու և հովիտներու
մոգիչ սրինգ էր դարձած: Ամէնէն վերջ լսե-
ցինք, կարօտի արցունքով «Կոմիտասի ծառ»
գաս, ... մեր աշխարհէն խալիկ մի չունի՞ս:
Պէտք էր տեսնել մեր քեմակը իր ծուն-
կին վրայ տարուբերելու առեն թովիչ նուա-
գարանը, իր ինքնամփոփ վերացումով, քե-
մակը լայն յոյգերուն և զգալի հեծկտանքին մէջ
իր դէմքին վրայ հոգեկան խոր ապրումն և
ներաշխարհի ցեղային տառապանքը՝ հօգի հա-
կազդեցութեամբ յոյսի և կեանքի: Եւ իսկապէս
Ֆրանս. հիւպատոսն արտայայտուելով՝ ըսաւ թէ
«Գեղեցիկ արտայայտութիւններէն կը հասկնա-
յինք մեզի անձանթ երգին իմաստները»:

Հիացումին վրայ իր մատներու շնորհին և
անօրինակ ու անպարտաս երազութեան. «Մեր
ուժը մեր ցեղին քաջութեան կը պարտինք», կը
պատասխանէր Աշուղ Ռուբէն:
Հիւրասիրութեան պահուն, բոլոր հանդիսա-
կանները ուրախակից եղան Հայ Աշուղին և իր
կանները ուրախակից իր տաղանդն և զգացու-
թիւնը, և դրուատեցին իր տաղանդն և զգացու-
մը: Օտարներ, առաջին անգամ տեսնելով քե-
մակը, լաւ, շատ հետաքրքրուեցան և տեղեկութիւն
ներ առին գործիքին և անոր նուագածութեան
եղանակի մասին: Ռուբէն համբաւեալ երգահան
մէջ նուագածու մ'ըլլալէ զատ, ան բազմաթիւ
միջակիցներու մէջ առաջնութիւնը շահած էր և
մրցակիցներու մէջ առաջնութիւնը շահած էր և
յօրինած Իրազի արքայական քայլերգը, և պար-
ծանքն ունէր իր պապական ժառանգութիւնը
կազմող 130 ամեայ սիրուն ու նաշխուն քեմակ-
այի կատարելագործութեան մէջ՝ աւելցուցած
ըլլալով անոր երեք լարերուն վրայ չորրորդ
մ'ալ, 1910ին:

Յաջորդ օրը Աշուղ Ռուբէն կ'այցելէր վանքս,
զմայլած անոր շնաշխարհիկ դիրքին, հոն թեւա-
ծող ու ապրող հայ հոգեւորական յատուկ առար-
թեանց վրայ, իր ուշադրութեան յատուկ առար-
կայ ըրած հայկական թանկագին ձեռագիրները:

Հոգեկան մեծ գոհունակութեամբ և ներշնչու-
մով մեկնեցաւ վանքէս, հրաւիրել մը վրայ փու-
թով կրկին Միւսան մեկնելով:

ԽՍԲ.